դապետի անունը· եւ այսպէս, նոյնիսկ հպարտութեան զգացումով· մե՛ր Մեսրոպը, մե՛ր Նարեկացին, մե՛ր Կոմիտասը:

Մենք այս բոլորը կը պատմենք, սիրելի ուսանողներ, յատկապէս ձեզի համար, որպէսզի դուք ալ ճանչնաք ձեր Հայաստանցի եղբայրները եւ քոյրերը, եւ նմանիք անոնց· վստահ ենք որ ձեր դաստիարակները այդ աշխատանքն է որ կը տանին ձեր վրայ այստեղ:

Մենք եկած ենք, հետեւաբար, օրհնելու ձեր աշխատանքը, Մեր սրտէն բղխած ամէն բարի մաղթանքներով հանդերձ, եւ աղօթել առ Աստուած՝ որ Տէրը անսասան պահէ Մխիթարի Տունը, անոր զինուորեալ միաբանները· Աստուած անսասան պահէ Մուրատ-Ռափայէլեան սբանչելի այս հաստատութիւնը· եւ ոյժ ու խանդ, միշտ լաւատեսութեան հոգի եւ յարատեւ աշխատանքի ոգի պարգեւէ դեկավարներուն, Տեսուչին, դաստիարակներուն, որպէսզի անոնք կարողանան իրենց սուրբ առաքելութիւնը շարունակել:

Եթէ մինչեւ հիմա, մինչեւ տասը կամ տասնհինգ տարի առաջ գուցէ ձեր աշխատանքը կղզիացածի նման բան էր, այսօր Հայաստանի հետ մէկտեղ՝ դուք մէկ ամբողջութիւն կը կազմէք, անբաժանելի եւ անխորտակելի (*Ծափեր, ծափեր*):

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆԴՐՈՆՆԵՐԷՆ
ՈՒՂՂՈՒԱԾ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՍ ԸՆԴՀ· ԱԲԲԱՀՕՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՅԷՆ

Երեւան, 6 Մայիսի 1970

Հայկ· ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ· Համբարձումեանի յանձնարարութեամբ իր եւ ԳԱ հասարակական գիտութիւնների բաժանմունքի անունէն Ձեր մօտ կը հանդիսանամ Ձեզ շնորհաւորելու եւ Հայր Ալիշանի սենեակ-թանգարանի բացումը: Հայագիտութեան զարգացմանը մատուցած Միաբանութեանդ ծառայութիւնները երաշխիք են, որ յետ այսու եւս կը շարունակուի Ձեր բեղմնաւոր աշխատանքը ի ծաղկումն հայ մշակոյթի եւ հայագիտութեան:

Ցանկանում ենք վաստակաշատ Միաբանութեանդ խաղաղ ու երջանիկ կեցութիւն, նորանոր գիտական եւ մշակութային նուաճումներ:

Ցայտնում ենք շնորհակալութիւն Ձեր սիրալիր հրաւէրի համար, օրհնյ, ցաւօք, օգտուել չկարողացանք ժամանակի սղութեան պատճառով:

Ամենախորին յարգանքներով՝

Ծ· ԱՂԱՅԵԱՆ

Հայկ· ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի
Հասարակական Գիտութիւնների Բաժանմունքի Ակադեմիկոս-
Քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ Ակադեմիկոս

ԵՐԵՒԱՆԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԷՆ

Երեւան, 30 Ապրիլի 1970

Գերապայծառ Տէր

Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի անունից ջերմագին ողջոյններ ենք յղում Մխիթարեան Միաբանութեանը եւ անձամբ Ձեզ՝ Ս. Ղազարի նորակառոյց ձեռագրատան եւ Ղեւոնդ Ալիշանի սենեակ-թանգարանի բացման առիթով։

Մեծ Մխիթարն ու իր արժանաւոր հետեւորդները քաջ դիտակցեցին գիտութեան եւ լուսաւորութեան դերը օտար բռնակալների ծանր լծի տակ կեղեքուող հայ ժողովրդի զոյատեւման եւ ազգային զարթօնքի ճանապարհին։

Հայրենի երկրից հեռու՝ օտար երկնքի տակ ծուարած մի փոքրիկ կղզում, աշխարհի տարբեր ծայրերից մեծ զոհողութիւնների գնով նրանք հաւաքեցին եւ կորսից փրկեցին մեր մշակոյթի հազարաւոր մեծարժէք ձեռագիր մատեաններ։ Ս. Ղազարը դարձաւ դիտանականների կղզի, որտեղ ուսնեցին հայ մշակոյթին անսահմանօրէն նուիրուած ջերմեռանդ գործիչներ, որոնց անունները յաւերժ դրոշմուեցին հայ մշակոյթի պատմութեան էջերում։

Ձեր ջանքերով հիմնադրուած նոր ձեռագրատունը լաւագոյն յուշարձանն է Մխիթարեան դիտանականների խնկելի յիշատակին։ Անտարակոյս գերբաղդիր կոթողների պահպանութեան համար ստեղծուած արդիական պայմանները նոր խման կը դառնան 250ամեայ Մխիթարեան բանասիրութեան լաւագոյն աւանդների նորոգմանը։

Բազմաքանքար Ղեւոնդ Ալիշանի վիթխարի վաստակի նկատմամբ երախտիքի ու գնահատանքի նոր վկայութիւն է նրա սենեակ-թանգարանի բացումը։ Նահապետի հարուստ ժառանգութիւնը պահպանում է իր բարձր գիտական արժէքը եւ օրինակ ծառայում հայագիտական նորանոր ուսումնասիրութիւնների համար։

Ուսումնասիրելով եւ հրապարակելով մեր հնագոյն եւ վիրածնուած ժողովրդի հոգեւոր մշակոյթի յուշարձանները, ինչպէս նաեւ թարգմանելով դրանք օտար լեզուների, Դուք առաջիկայում մեծապէս կարող էք սատարել հայագիտական ուսումնասիրութիւնների ծաւալմանը։

Եւ այսօր, Ձեզ եւ մեզ համար բերկրալի այս հանդիսութեանց առիթով, ողջոյններ ենք յղում Ձեզ Մայր Հայրենիքից եւ մաղթում Միաբանութեանդ բեղմնաւոր գործունէութիւն հայագիտութեան անդաստանում։

Լ. ԽԱՉԻԿԵԱՆ
Մատենադարանի տնօրէն

ՍՓԻԹՈՒՌԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԷԷՆ

Երեւան, 30 Ապրիլի 1970

Գերապայծառ Աբրահամը,

Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն ջերմօրէն ողջունում է Ձեզ եւ Միաբանութեան բոլոր Հայրերին, Մխիթարեան նշանակալի ձեռագրատան, ինչպէս նաեւ Հայր Ալիշանի սենեակ–թանգարանի բացման ուրախալի առիթներով: Ալիշանանուն սենեակ–թանգարանը լաւ նուէր է մեր ժողովրդի բազմաքանքար զաւակ, մեծանուն բանաստեղծ–բանասէր, պատմաբան ու աշխարհագրագէտ Ալիշանի ծննդեան 150ամեակին, որ լրանում է այս տարի:

Մխիթարեան Միաբանութիւնը բազմաթիւ փայլուն էջեր է գրել հայագիտութեան զարգացման, ազգային գոյատեւման տարեշրջանում: Ուխտի հիմնադիր Մխիթար Սեբաստացին իր հոգու խորքում միշտ կենդանի պահեց հայրենի Սեւանը եւ Սուրբ Ղազար կղզին Ջերմացրեց հայրենիքի նկատմամբ կարօտով ու սիրով: Նրա ջերմ սէրը դէպի հայրենիքը, ժառանգեցին Մխիթարեան Հայրերի յաջորդ սերունդները: Այսօր էլ Վենետիկի Մխիթարեանների հայեացքն ու զգացումները ուղղուած են դէպի Մայր Հայաստանը:

Հայ մշակոյթի տարածումը միշտ էլ հանդիսացել է Մխիթարեան Հայրերի նուիրական գործունէութիւնը Եւրոպայի քաղաքակրթութեան կենտրոններում: Նրանք ապրի սեփականութիւնն են դարձրել համաշխարհային գրական արժէքները, իսկ հայկականը ծանօթացրել Եւրոպային ու աշխարհին: Առանց Մխիթարեանների բեղուն գործունէութեան, շատ բան կը կորցնէր ընդհանուր հայագիտութիւնը:

Ձեզ նոր յաջողութիւններ ենք մաղթում՝ փառք հայրենիքս մշակոյթի ու գիտութեան զարգացման:

Յարգանքներով՝
Կոմիտէի Նախագահ
Վ. ՀԱՄԱՍԱՍՊԵԱՆ